Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

Համայնքային սեփականություն հանդիսացող ընդերքօգտագործման հողամասը վարձակալության տրամադրելու մասին որոշման նախագծի

Որոշման ընդունումը բխում է Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 5-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի Ը) ենթակետի պահանջից, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 2022 թվականի հունիսի 21-ին տրված NL լեռնահատկացման ակտի, ինչպես նաև օգտակար հանածոների արդյունահանման N ՇԱԹ-29/682 թույլտվության, համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության տրամադրելու մասին:

Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է <<ՄԼ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ին ընդերքօգտագործման աշխատանքների կատարման համար վարձակալությամբ տրամադրել համայնքային սեփականություն հանդիսացող 7,2233 հա ընդերքօգտագործման հողամասը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության տրամադրելու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

<<ՄԼ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ին համայնքային սեփականություն հանդիսացող 7,2233 հա մակերեսով ընդերքօգտագործման հողամասը վարձակալության տրամադրելու մասին որոշման ընդունումը Նաիրի համայնքի բյուջեում ենթադրում է տարեկան 3250000 դրամ եկամուտների ավելացում:

Աշխատակազմի բնապահպանության, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի պետ՝ **Բ.Թադևոսյան**